ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 12 » հոկտեմբերի 2015 **թվականի** N 1890-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերությամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 10-ի N 61-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի 3-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրության փոփոխությունների 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեի քարոզչական պաստառներ փակցնելու համար Գյումրի համայնքի վարչական տարածքում առանձնացնել հետևյալ հատուկ տեղերը.

1) Շահումյան փողոց 188 շենքի հյուսիսային պատ - 1մ×1,5մ,
2) Անկախության հրապարակ Գուլպայի ֆաբրիկայի ակումբի դիմացի կանգառ - 1մ×1,5մ,
3) Բագրատունյաց հրապարակ 8 շենքի դիմացի կանգառ - 1մ×1,5մ,
4) Շիրակացու փողոցի 58 ^{Ա} շենքի հյուսիսային պատ - 1մ×1,5մ,
5) Խորենացու փողոցի 10 շենքի հյուսիսային պատ - 1մ×1,5մ,
6) Ղանդիլյան հրապարակի և Գորկու փողոցի հատման անկյունի կանգառ- 1մ×1,5մ,
7) Երևանյան խճուղու սկզբնամասի կանգառ- 1մ×1,5մ,
8) «Մուշ-2» թաղամաս 10/Ե շենքի հյուսիսային պատ - 1մ×1,5մ,
9) Շարլ Ազնավուրի հրապարակ նախկին «Հայաստան» կինոթատրոնի շենքի հարավային պատ-1մ×1,5մ,
10) «Վարդ-բաղ» թաղամաս 1-ին մ/շ 1 շենքի հարավային պատ - 1մ×1,5մ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2015թ. ք.Գյումրի